7912

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«08» 05 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0075-23

Ձեռնարկողը՝ ***«Ավ Կոմպանի» ՍՊԸ***
ք.Երևան, Կոմիտաս պողոտա 60/2

Գործունեությունը՝ ***Ստեփանավան համայնքի Աշոտաբերդ թաղամասում նախատեսվող 15 բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Լոռու մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0075-23

«08» 05 2023թ.

Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Աշոտաբերդ թաղամասում նախատեսվող 15 բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Ավ Կոմպանի» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ՀՀ Լոռու մարզ,Ստեփանավան, Աշոտաբերդ թաղամաս

Ներածական մաս. «Ավ Կոմպանի» ՍՊ ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսում է Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Աշոտաբերդ թաղամասում կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 7)-րդ կետի, «ա.» ենթակետի ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքների համար հիմք է հանդիսացել պատվիրատուի հայտը, Ստեփանավանի համայնքապետարանի կողմից 14.11.2022թ. տրված N 53 նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանք/: Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ համայնքային սեփականություն: Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցապատման ենթակա հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 16.92 հա:

Նկարագրական մաս. Աշոտաբերդ թաղամասը գտնվում է Ստեփանավան համայնքի սկզբնամասում՝ Երևան-Տաշիր ճանապարհի ձախակողմյան հատվածում: Թաղամասի մուտքը կազմակերպված է Ստեփանավան համայնքի Բաղրամյան փողոցից /Երևան-Տաշիր/: Քննարկվող թաղամասում գոյություն ունեն թվով 24 փայտյա բնակելի շենք, մանկապարտեզ, ավտոտնակներ, կիսաքանդ շինություններ և այլ նշանակության կրպակներ և շինություններ: Տարածքում գոյություն ունեցող վերոնշյալ շինությունները նախատեսվում է քանդել ըստ նախնական ստացած տեխնիկական վիճակի ուսումնասիրության եզրակացության:

Նախատեսվում է կառուցել թվով 15 բազմաբնակարան բնակելի շենք՝ ապահովելով քանդվող բնակարանների քանակները և մակերեսները: Նախատեսվում է կառուցել 3 տիպային շենք, որոնցից ՝ Տիպ 1-11 շենք (1-ին տիպի շենքը բաղկացած է 3 հարկից: Շենքի արտաքին չափերն են. Լայնությունը՝ 17.8 մ, երկարությունը՝ 31.8մ, բարձրությունը շենքի +/-0.00 նիշից՝11.8 մ: Տիպ 2-2

շենք (2-րդ տիպի շենքը բաղկացած է 3 հարկից և նկուղային հարկից: Շենքի արտաքին չափերն են լայնությունը՝ 17.8 մ, երկարությունը՝ 31.8, բարձրությունը շենքի +/-0.00 նիշից՝ 11.8 մ: Կառուցապատման մակերեսը հողի վրա-561.76 քմ), Տիպ 3-2 շենք (3-րդ տիպի շենքը բաղկացած է 3 հարկից և նկուղային հարկից: Շենքի արտաքին չափերն են լայնությունը՝ 17.8մ, երկարությունը՝ 31.8, բարձրությունը շենքի +/-0.00 նիշից՝ 11.8 մ: Կառուցապատման մակերեսը հողի վրա-561.76 քմ): Խոհանոցներում և լոգարաններում նախատեսված են ուղղաձիգ հորաններով օդի արտածման համակարգեր: Օդի արտածումը կատարվում է բնական եղանակով: 2-րդ և 3-րդ տիպի շենքերի նկուղային հարկում նախատեսվում է թաքստոց, որը նախատեսվում է օգտագործել որպես ավտոկայանատեղի բնակիչների համար: Բազմաբնակարան բնակելի շենքի ավտոկայանատեղիիում նախագծված են օդափոխության և ծխահեռացման համակարգեր՝ մեխանիկական դրդմամբ: Ավտոկայանատեղիից ծխահեռացումը իրականացվում է ԾՀ-1 համակարգով՝ կենտրոնախույս ծխահեռացման օդամուղի միջոցով: Ն-3 համակարգով կոմպենսացվում է հրդեհի ժամանակ հեռացվող օդը: Ն-2 համակարգով կատարվում է օդի դիմհար սանդղավանդակի և վերելակի նախամուտքին՝ ապահովելով մարդկանց էվակուացիան հրդեհի ժամանակ:

Կառուցապատվող տարածքը ունի քիչ թեքություն: Տարածքի բարեկարգման շրջանակներում նախատեսվում է նորոգել ճանապարհները և կառուցել նորերը /լայնությունը ընդունված է 6 մ/, ինչպես նաև նախատեսել մայթեր և քայլուղիներ: Բնակարանների քանակը 308 հատ (15 շենքերում միասին), ավտոկայանատեղիների քանակը 68 հատ (ներսում), 227 հատ (դրսում):

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս, կտնկվեն ծառեր և թփեր: Տարածքում նախատեսվում է տնկել սոճի 308 հատ, թղկի 308 հատ, հուդայածառ 68 հատ, կեչի 154 հատ, ուռենի 308 հատ: Կանաչապատ տարածքների ներքին ոռոգման ցանցը նախատեսվում է կաթիլային: Նախատեսվող կանաչապատման աշխատանքերի համար կօգտագործվի տեղի բուսահողը: Կանաչապատման աշխատանքները կիրականացվեն ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման համապատասխան: Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող 6200 խմ ծավալով հողի բերրի շերտը կկուտակվի տարածքում պահպանելու նպատակով: Բերրի շերտի հանումը, տեղափոխումը, պահեստավորումը և հետագա օգտագործումը իրականացվելու է համաձայն ՀՀ կառավարության 2017թ նոյեմբերի N1404 որոշման :

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը գտնվում է Լոռվա սարահարթի սահմաններում: Տեղանքի ռելիեֆը հարթ է փոքր թեքությամբ ընկնում է դեպի հյուսիս-արևմուտք:

Վարչական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի ծայր արևելյան մասում: Նախատեսվող տարածքի արտաքին սահմանագծից 50մ շառավղով այլ շենք, շինություններ չկան: Տարածքում բնության և պատմամշակույթային հուշարձաններ չկան: Ծառաթփային բուսականությունը բացակայում է:

Ստեփանավան քաղաքի մոտակայքում գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքն է Ստեփանավանի դենդրոպարկը, այն գտնվում է Լոռու մարզի Գյուլագարակ գյուղում, Ստեփանավան քաղաքից 12 կմ հեռավորության վրա, Երևանից 155 կմ հյուսիս, ծովի մակերևույթից շուրջ 1450 մետր բարձրության վրա:

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՍՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետ և հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 48,0 ամիս շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները կատարվելու են պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինհրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգներով: Շինհրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով, մարդկանց անցման հատվածներում անվտանգության նկատառումներով պայմանավորված նախատեսել թիթեղյա ծածկոց:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

Մասնաշենքերի ներքին ինժեներական ցանցերի միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռանարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Ստեփանավան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու: Շինարարությունը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից: Բրիգադների քանակական և մասնագիտական /որակական/ կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա: Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը կազմում է 94 մարդ, որից ինժիներատեխնիկական անձնակազմ՝ 4 մարդ:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է ամսական մեկ մարդու հաշվարկով 6 կգ 94x6x48/1000= 27.1տ և շինարարական աղբն է մոտ 18624տ ծավալով: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

Բազմաբնակարան բնակելի շենքերի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի ցանցին, որի համար սահմանված կարգով ստացվել է տեխնիկական պայման և լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ: Ջրամատակարարումը հնարավոր է միացնել հարևանությամբ անցնող d=160 մմ ջրագծից, իսկ կոյուղին՝ շրջանցվող կոյուղատարին d=250մմ խողովակով:

Շինարարության փուլում ջրցանման համար անհրաժեշտ ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով, իսկ աշխատողների խմելու ջուրը կմատակարարվի տարաներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում բնակելի շենքերի էլեկտրամատակարարումը կիրականացվի Աշոտաբերդ թաղամասում գործող 2 հատ տրանսֆորմատորային ենթակայաններից 1. ԼՏԵ 3023 250կվա հզորությամբ, ԼՏԵ 3024, 400 կՎԱ հզորությամբ: Բնակելի համալիրի գազաֆիկացումը 592խմ ժամային ծախսով կիրականացվի Աշոտաբերդ թաղամասում ՊԳԿԿ-100-ի ելքագծի գազատար խողովակից:

Բնակելի համալիրի գազաֆիկացումը 592խմ ժամային ծախսով կիրականացվի Աշոտաբերդ թաղամասում ՊԳԿԿ-100-ի ելքագծի գազատար խողովակից:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի էներգաարդյունավետությունը նախատեսվում է համապատասխանեցնել ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին, ինչի ուղղությամբ իրականացվելու են համալիր միջոցառումներ, որոնց թվում են երեսպատման համակարգը, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհաններ և վիտրաժներ, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացում:

Նախատեսված է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- շինարարական աշխատանքներում փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրական 2-3 անգամ,
- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը կիրականցվի փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
-կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կներկայացվի համայնքի համաձայնեցմանը,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կկազմակերպվի ցերեկային ժամերին,
-շինարարական աշխատանքներում կներգրավվի ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք կշահագործվի տեխնիկական նորմալ վիճակում,
--շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկականն միջոցներ,
-պարբերաբար կստուգվի շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և կիրականացվի կարգաբերումներ:

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ:

2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;

3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;

4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

5. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,

6. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար: Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարաության ընթացքում հատկացնել 2480000 դրամ:

Պատճառաբանական մաս. Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Ստեփանավանի համայնքապետարանի վարչական շենքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ Առողջապահության, Արտակարգ իրավիճակների, Ներքին գործերի Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, Քաղաքաշինության կոմիտեից, Կադաստրի կոմիտեից, Լոռու մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել Հայտի լրամշակումներում:

Ամփոփելով Հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

2. Կանաչապատման աշխատանքներն իրականացնել ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման համապատասխան:

3. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝

- շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- բետոնի տեղափոխումն իրականացնել Հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

4. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ

օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Ստեփանավանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
5. Շինարարական աշխատանքների ընթացքում չխաթարել անշարժ գույքի տեղեկատվական համակարգի տվյալների համաձայն՝ կառուցապատման համար նախատեսված հողատարածքում առկա սեփականատերերի գույքային իրավունքները:
6. Տարածքի կանաչապատման աշխատանքները համաձայնեցնել Ստեփանավանի համայնքապետարանի հետ և իրականացնել «Բարեկարգման, արդիականացման և կանաչապատման» նախագծի համաձայն, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:
7. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
8. Նախագծի վերջնական տարբերակում և շինարարական աշխատանքների ընթացքում հաշվի առնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի, «ՀԷՑ» ՓԲԸ-ի և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի պահանջները:
9. Նախագծի վերջնական տարբերակում հաշվի առնել ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» որոշման պահանջները:
10. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Աշոտաբերդ թաղամասում նախատեսվող 15 բազմաբնակարան բանակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի փորձագետ՝ Աննա Սարգսյան